

ՖՀՄՍ 9

Ֆինանսական գործիքներ

**Մաս 1. Նպատակը, գործողության
ոլորտը, ճանաչումը և ապաճանաչումը**

Երևան, 2020

Վերապահում և օգտագործման պայմաններ

Սույն ներկայացումը պատրաստվել է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ տնօրեն Արթուր Հարությունյանի կողմից՝ ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակված ստանդարտի, դրա պաշտոնական հայերեն թարգմանության, ինչպես նաև ՀՀՄՍԽ անձնակազմի կողմից պատրաստված ոչ պաշտոնական նյութերի օգտագործմամբ:

Սույն ներկայացումը կարող է օգտագործվել առանց հեղինակի համաձայնության միայն ոչ առևտրային նպատակներով:

Հեղինակը չի ստանձնում որևէ պատասխանատվություն որևէ վնասի համար, որը կարող է առաջանալ սույն ներկայացումն օգտագործելուց կամ չօգտագործելուց կամ դրան հղում կատարելուց կամ չկատարելուց: Սույն ներկայացումը նպատակ ունի ծառայելու միայն որպես ուղեցույց, այլ ոչ թե որպես խորհրդատվություն:

Հապավումներ (1)

- ՖԱ՝ ֆինանսական ակտիվ
- ՖՊ՝ ֆինանսական պարտավորություն
- ՖԳ՝ ֆինանսական գործիք
- ՖԵՊ՝ ֆինանսական երաշխավորության պայմանագիր
- ԻԱՇՎ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
- ԻԱԱՀՖԱ՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով
- ԱՀՖԱ՝ Այլ համապարփակ ֆինանսական արդյունք
- ՇկՎ՝ շահույթ կամ վնաս
- ԱմԱր՝ ամորտիզացված արժեք
- ԻրԱր կամ ԻԱ՝ իրական արժեք
- ՊԴՀ՝ պայմանագրային դրամական հոսքեր

Հապավումներ (2)

- ՀՀԱ՝ համախառն հաշվեկշռային արժեք
- ԱՊԿ՝ ակնկալվող պարտքային կորուստներ
- ՊՌՆԱ՝ Պարտքային ռիսկի նշանակալի աճ
- ՊՌ՝ Պարտքային ռիսկ
- ՊՌԾ՝ պարտքային ռիսկով ճշգրտված
- ՊԱԱ՝ պարտքային առումով արժեզրկված
- ՊՏՀ կամ ՊՀ (PD)՝ պարտազանցման տեղի ունենալու հավանականություն
- ԿՊԴ (LGD)՝ կորուստը պարտազանցման դեպքում
- Կ՝ կազմակերպություն
- Պ՝ պայմանագիր

- ՀՀՄՍ 32 Ֆինանսական գործիքներ. ներկայացումը
- ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը
- ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումը
- ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

- *Ֆինանսական գործիք*՝ պայմանագիր, որը մի Կ-ում առաջացնում է ՖԱ, իսկ մյուսում՝ ՖՊ կամ բաժնային գործիք:
- *Բաժնային գործիք*՝ պայմանագիր, որը հավաստում է Կ-թյան՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացած ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք:

Սահմանումներ ՀՀՄՍ 32-ից

Ֆինանսական ակտիվ

7

□ **Ակտիվ**, որը հանդիսանում է՝

- դրամական միջոց,
- այլ կազմակերպության բաժնային գործիք,
- պայմանագրային իրավունք՝
 - այլ Կ-ից ԴՄ կամ այլ ՖԱ ստանալու, կամ
 - այլ Կ-թյան հետ, իր համար պոտենցիալ նպաստավոր պայմաններով, ՖԱ-ներ կամ ՖՊ-ներ փոխանակելու, կամ

□ **Ակտիվ**, որը հանդիսանում է՝

- պայմանագիր, որը մարվելու է կամ կարող է մարվել Կ-թյան սեփական բաժնային գործիքներով և հանդիսանում է՝
 - ոչ ածանցյալ գործիք, որի գծով կ-ը պարտավոր է կամ կարող է պարտավորվել ստանալու փոփոխական քանակությամբ իր իսկ բաժնային գործիքներ, կամ
 - ածանցյալ գործիք, որը մարվելու է կամ կարող է մարվել այլ կերպ, քան ֆիքսված գումարի ԴՄ-ը կամ այլ ՖԱ ֆիքսված քանակությամբ Կ-թյան սեփական բաժնային գործիքների հետ փոխանակելով: Այս նպատակի համար Կ-թյան բաժնային գործիքները չեն ներառում՝
 - վերադարձնելի ՖԳ-երը, որոնք դասակարգվել են որպես բաժնային գործիքներ,
 - այն գործիքները, որոնք Կ-թյան վրա պարտականություն են դնում՝ այլ կողմին տրամադրելու իր զուտ ակտիվների համամասնական բաժինը միայն լուծարման ժամանակ, և դասակարգվում են որպես բաժնային գործիքներ,
 - կամ այն գործիքները, որոնք հանդիսանում են Կ-թյան սեփական բաժնային գործիքների ապագա ստացման կամ տրամադրման պայմանագրեր:

Սահմանումներ ՀՀՄՍ 32-ից

Ֆինանսական պարտավորություն

- **Պարտավորություն**, որը հանդիսանում է՝
 - պայմանագրային պարտականություն՝
 - այլ Կ-թյանը ԴՄ կամ այլ ՖԱ տրամադրելու, կամ
 - այլ Կ-թյան հետ, իր համար պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով, ՖԱ-ներ կամ ՖՊ-ներ փոխանակելու, կամ
 - պայմանագիր, որը մարվելու է կամ կարող է մարվել Կ-թյան սեփական բաժնային գործիքներով և հանդիսանում է՝
 - ոչ ածանցյալ գործիք, որի գծով կ-ը պարտավոր է կամ կարող է պարտավորվել տրամադրելու փոփոխական քանակությամբ իր իսկ բաժնային գործիքներ, կամ
 - ածանցյալ գործիք, որը մարվելու է կամ կարող է մարվել այլ կերպ, քան ֆիքսված գումարի ԴՄ-ը կամ այլ ՖԱ ֆիքսված քանակությամբ Կ-թյան սեփական բաժնային գործիքների հետ փոխանակելով: Այս նպատակի համար Կ-թյան բաժնային գործիքները

- ՖՀՄՍ 9-ի ընդունման պատճառները
- Գործողության ոլորտը
- Սկզբնական ճանաչում
- Ապաճանաչում
- Ֆինանսական ակտիվներ
 - Ապաճանաչում
 - Դուրս գրում
 - Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցումները
 - Ապաճանաչման պայմաններին չբավարարող փոխանցումները
 - շարունակվող ներգրավվածություն փոխանցված ակտիվներում
- Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)
 - շարունակվող ներգրավվածություն միայն փոխանցված ակտիվների մի մասում
 - պայմանագրային ԴՀ-երի վերափոխում
- Ֆինան. պարտավորություններ
 - Ապաճանաչում
 - Մարման հաշվառումը
 - Մասնակի մարման հաշվառումը
- Գնահատումներ և այլ դատողություններ

July 2014

International Financial Reporting Standard*

IFRS 9 Financial Instruments



- ՀՀՄՍ 39՝ հասկանալը, կիրառելը և մեկնաբանելը բարդ էր
- ՀՀՄՍԽ-ի նպատակն էր մշակել նոր ստանդարտ՝ հիմնված սկզբունքների վրա և ոչ այնքան բարդ
- ՖՀՄՍ 9-ը ՀՀՄՍԽ-ի արձագանք էր ֆինանսական ճգնաժամին և
- ՖԳ հաշվառման հիմնավորապես նոր «մոտեցումներ»

ՖԱ և ՖՊ դասակարգում և չափում

Արժեզրկում

Հեջի հաշվառում

ՖՀԱՄ 9

Գլխավոր թեման

- ՖԱ-երի, ՖՊ-երի և ոչ ֆինանսական հոդվածներ գնելու կամ վաճառելու որոշ պայմանագրերի ճանաչումը և չափումը.

Նպատակը

- Սահմանել սկզբունքներ *ՖԱ-երը և ՖՊ-երը ՖՀ-ում արտացոլելու համար*, որոնք ՖՀ օգտագործողներին կներկայացնեն տեղին և օգտակար տեղեկատվություն՝ ապագա ԴՀ –երի գումարները, ժամկետներն ու անորոշությունը գնահատելու համար:

Հիմնական դատողություն


- ՖԱ դասակարգումը
- Արժեզրկում

- ՖՀՄՍ 9-ը պետք է կիրառվի բոլոր տեսակի ՖԳ-ների նկատմամբ, բացառությամբ
 - Մասնակցություններ դուստր, ասոցիացված և համատեղ կազմակերպություններում (ՖՀՄՍ 10, ՀՀՄՍ 27, ՀՀՄՍ 28)
 - վարձակալության ներքո իրավունքների և պարտականությունների (ՖՀՄՍ 16)
 - աշխատակիցների հատուցումների պլանների ներքո գործատուների իրավունքների և պարտականությունների (ՀՀՄՍ 19)
 - սեփական բաժնային գործիքի (ՀՀՄՍ 32)
 - Ապահովագրական պայմանագրերի (ՖՀՄՍ 17)
 - ֆորվարդային պայմանագրի, որն ապագա ձեռքբերման ամսաթվի դրությամբ կհանգեցնի բիզնեսների միավորման (ՖՀՄՍ 3)
 - փոխատվության հանձնառությունների, բացի՝
 - ԻԱՇԿՎ նախորոշվածներից,
 - Նրանցից, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ ԴՄ-ով կամ մեկ այլ ՖԳ մատակարարելով կամ թողարկելով
 - շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառություններ
 - բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների (ՖՀՄՍ 2)
 - այն ծախսումների փոխհատուցման համար վճարումներ ստանալու իրավունքների, որոնց գծով ճանաչվել է պահուստ (ՀՀՄՍ 37)
 - ՖՀՄՍ 15-ի ոլորտում գտնվող ՖԳ հանդիսացող իրավունքների և պարտականությունների

Գործողության ոլորտը

ոչ ֆինանսական հողվածներ գնելու կամ վաճառելու պայմանագրեր

15



Սկզբունքը


- Ճանաչել ՖԱ-ը կամ ՖՊ-ը այն և միայն այն դեպքում, երբ Կ-ը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Առևտուրի ամսաթվի և վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառում

- Հաշվապահական քաղաքականության ընտրություն՝ ըստ ակտիվի դասի, բայց ընտրված մեթոդը պետք է հետևողականորեն կիրառվի:
- Որպես առանձին դաս են դիտվում՝ պարտադիր ԻԱՇԿՎ չափվողները, որպես ԻԱՇԿՎ նախորոշվածները և որպես ԻԱԱՀՖԱ բաժնային գործիքներում ներդրումները:
- Կիրառելի է միայն ՖԱ կանոնավոր կերպով գնման կամ վաճառքի համար (զուտ հիմունքով մարում չի թույլատրվում)

- Առևտրի ամսաթիվ → Կ-ը հանձն է առնում գնելու կամ վաճառելու ակտիվը
- Վերջնահաշվարկի ամսաթիվ → ակտիվը մատակարարվում է Կ-թյանը կամ նրա կողմից

Ապահանաչում



Գնահատման քայլերը՝


- Որոշել համախմբվող խումբը, որի մակարդակով պետք է կիրառվեն ապաճանաչման պահանջները
- Որոշել՝ ամբողջ ակտիվը թե դրա մասը պետք է գնահատվի
- Կիրառել ապաճանաչման չափանիշները

Գնահատել մի մասը միայն այն դեպքում, երբ այն բաղկացած է

- Հստակ նույնացված ԴՀ-երից,
- ԴՀ-երի լիովին համամասնական բաժնից, կամ
- Հստակ նույնացված ԴՀ-երի լիովին համամասնական բաժնից

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ



Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ռիսկերի ու հատույցների փոխանցման գնահատումը

Օրինակներ, երբ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվել են՝

- ՖԱ ոչ պայմանական վաճառք,
- ՖԱ վաճառք՝ գնման օպցիոնի հետ միասին՝ հետ գնելու այն հետգնման պահի ԻԱ-ով, և
- ՖԱ վաճառք՝ զուգակցված վաճառքի կամ գնման օպցիոնով, որի իրագործումը մեծապես ոչ ձեռնտու է (այսինքն՝ օպցիոն, որն այնքան շատ է ոչ ձեռնտու, որ մեծապես անհավանական է, որ դրա իրագործումը կդառնա ձեռնտու մինչ ժամկետի լրանալը):

Օրինակներ, երբ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվել՝

- Վաճառք և հետգնման համաձայնագիր, երբ հետգնման գինը ֆիքսված է կամ հավասար է վաճառքի գնին՝ գումարած փոխատուի հատույցը.
- արժեթղթերի փոխատվություն.
- ՖԱ վաճառք՝ զուգակցված ամբողջ հատույցի սվոպով, որը շուկայական ռիսկին ենթարկվածությունը հետ է վերադարձնում կազմակերպությանը:
- ՖԱ վաճառք՝ զուգակցված վաճառքի կամ գնման օպցիոնով, որի իրագործումը մեծապես ձեռնտու է (այսինքն՝ օպցիոն, որն այնքան շատ է ձեռնտու, որ մեծապես անհավանական է, որ դրա իրագործումը կդառնա ոչ ձեռնտու մինչ ժամկետի լրանալը), և
- Կարճաժամկետ ԴՊ վաճառք, երբ կազմակերպությունը երաշխավորում է փոխհատուցել հնարավոր պարտքային կորուստները:

Ֆինանսական ակտիվներ

Դուրս գրում




Դուրս գրում →
ապաճանաչման
դեպք

Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցումները

- ՖԱ-ն ամբողջությամբ ապաճանաչելիս՝
 - Հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման տարբերությունը ճանաչվում է ՇԿՎ-ում
- Երբ փոխանցվում է ՖԱ, որը բավարարում ամբողջությամբ ապաճանաչմանը, սակայն՝
 - Կազմ-ը պահպանում է իրավունք սպասարկելու ՖԱ-ը վճարի դիմաց → ճանաչել սպասարկման ակտիվ կամ սպասարկման պարտավորություն, կամ
 - Եթե փոխանցման արդյունքում կազմ-ը ձեռք է բերում նոր ՖԱ կամ ստանձնում է նոր ՖՊ կամ սպասարկման պարտավորություն → ճանաչել նոր ՖԱ-ը, նոր ՖՊ-ը կամ սպասարկման պարտավորությունը իրական արժեքով

Փոխանցված մասը, ամբողջությամբ վերցրած, բավարարում է ապաճանաչման պայմանները



- ավելի մեծ ՖԱ-ի նախկին ՀԱ-ը պետք է բաշխվի դեռևս ճանաչվող և ապաճանաչված մասերի միջև՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական ԻԱ-երի հիման վրա
- Ապաճանաչված մասի ՀԱ-ի և ստացված հատուցման միջև տարբերության չափով օգուտ կամ կորուստ ճանաչել ՇԿՎ-ում

Պահպանվել են փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները

- Շարունակել ճանաչել փոխանցված ակտիվն ամբողջությամբ
- Ստացված հատուցում→ճանաչել որպես ՖՊ
- Ճանաչել փոխանցված ակտիվի գծով առաջացած որևէ եկամուտ և ՖՊ գծով առաջացած որևէ ծախս

Շարունակվող ներգրավվածություն փոխանցված ակտիվներում

Փոխանցված ակտիվ

- Ճանաչել շարունակվող ներգրավվածության չափով՝ արտացոլելով փոխանցված ակտիվի արժեքի փոփոխություններին ենթարկվածության չափը
- Օրինակ՝ փոխանցված ակտիվի երաշխավորում. շարունակվող ներգրավվածություն = հետևյալ երկուսից նվազագույնը՝ (i) ակտիվի գումարը և (ii) ստացված հատուցման այն առավելագույն գումարից, որի վերադարձումը կազմակերպությունից կարող է պահանջվել («երաշխիքի գումար»):

Դրա հետ կապված պարտավորություն

- Չափվում է այնպես, որ փոխանցված ակտիվի և դրա հետ կապված պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը՝
- (ա) Կ-թյան կողմից պահպանված իրավունքների և պարտականությունների ամորտիզացված արժեքն (ԱՄԱր) է, եթե փոխանցված ակտիվը չափվում է ԱՄԱր-ով, կամ
- (բ) հավասար է կ-թյան կողմից պահպանված իրավունքների և պարտակ-երի ԻԱ-ին՝ առանձին չափվելու դեպքում, եթե փոխանցված ակտիվը չափվում է ԻԱ-ով:

Հետագա չափում

- Փոխանցված ակտիվի և դրա հետ կապված պարտավորության ԻԱ-ի ճանաչվող փոփոխությունները հաշվառվում են միանման կերպով և չպետք է հաշվանցվեն:
- Պետք է շարունակել ճանաչել փոխանցված ակտիվից առաջացող ցանկացած եկամուտ շարունակվող ներգրավվածության չափով և պետք է ճանաչի համապատասխան պարտավորության գծով առաջացող ցանկացած ծախս. այդ գումարները չպետք է հաշվանցվեն:

Բաշխել նախկին
հաշվեկշռային արժեքը

Ապաճանաչված մասի
և այն մասի միջև, որը
շարունակում է
ճանաչվել՝
հարաբերական ԻԱ-
երի հիման վրա

Ճանաչել օգուտ կամ
կորուստ

Ապաճանաչված
մասին բաշխված ՀԱ-ի
(չափված
ապաճանաչման
ամսաթվի դրությամբ)
և ստացված
հատուցման միջև
տարբերության չափով

Պայմանագրային ԴՀ-երի վերափոխում

Ֆինանսական ակտիվ

28

- Պայմանագրային ԴՀ վերաբանակցումը կամ վերափոխումը, որը չի հանգեցնում ապաճանաչման.
 - վերահաշվարկել համախառն հաշվեկշռային արժեքը (ՀՀԱ) որպես վերաբանակցված կամ վերափոխված ՊԴՀ ներկա արժեք՝ զեղչված սկզբնական արդյունքային տոկոսադրույքով (կամ ՊԴՃ արդյունքային տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված ՊԱԱ ՖԱ համար)
 - Ճանաչել վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում
 - Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ՖԱ-ի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում վերափոխված ՖԱ-ի մնացորդային ժամկետում:

Պայմանագրային ԴՀ վերափոխում

Օրինակ

- Ա բանկը սկզբնավորում է 5 տարով վարկ. պայմանագրային գումարն ամբողջությամբ ենթակա է մարման ժամկետի վերջում:
- Պայմանագրային անվանական գումարը = ԱՄ1,000, տոկոսադրույքը՝ 5%, ենթակա է վճարման տարեկան: Արդյունքային տոկոսադրույքը 5% է:


Տարի	ՀՀԱ Սկ. Մն.	Արժեզրկ. (կորուստ)/օգուտ	Վերափ. (կորուստ)/օգուտ	%-ային եկամուտ	ԴՀ	ՀՀԱ վերջ. մն.	Կորստի պահուստ	ԱմԱր վերջ. մն.
	A	B	C	D Համախ՝ $A \times 5\%$	E	$F = A + C + D - E$	G	$H = F - G$
1	ԱՄ1,000	(ԱՄ20)		ԱՄ50	ԱՄ50	ԱՄ1,000	ԱՄ20	ԱՄ980
2	ԱՄ1,000	(ԱՄ10)		ԱՄ50	ԱՄ50	ԱՄ1,000	ԱՄ30	ԱՄ970
3	ԱՄ1,000	(ԱՄ70)	(ԱՄ300)	ԱՄ50	ԱՄ50	ԱՄ700	ԱՄ100	ԱՄ600

- 3-րդ տարի՝ փոխառուի զգալի ֆին. դժվարությունից հետո Ա բանկը վերափոխում է վարկի ՊԴՀ-ն՝ պայմանագրային ժամկետը երկարացնում է 1 տարով՝ վերափոխման պահից մնացորդային ժամկետը 3 տարի: Վերափոխումը չի հանգեցնում Ա բանկի կողմից վարկի ապաճանաչման:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորություններ

30



Ապահանաչում

ՖՊ-եր – չափանիշների կիրառում

31

Ըստ էության ազատում

Վճարում երրորդ
կողմին (օր.
տրաստ)

Չի մարում
պարտքն առանց
պարտավ-ից
իրավական
ազատման

Պարտքի հետգնում

Պարտքային գործիք
թողարկողը հետ է
գնում այդ գործիքը

Պարտքը մարվում է,
նույնիսկ եթե
թողարկողը մտադիր
է շուտով
վերավաճառել

Եթե ՖՊ-ն մարվում է (այսինքն՝ պայմանագրային պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է), ապա՝

- ՖՊ-ն ապաճանաչվում է,
- Մարված կամ այլ կողմի փոխանցված ՖՊ-ի (կամ ՖՊ-ի մի մասի) ՀԱ-ի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դր. ակտիվները կամ ստանձնած պարտավերը) միջեւ տարբերությունը պետք է ճանաչվի ՇԿՎ-ում

Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների վերափոխումը հաշվառվում է որպես մարում (այսինքն՝ էականորեն տարբեր պայմաններ/էական վերափոխում), ապա՝

- Սկզբնական ՖՊ-ն ապաճանաչվում է,
- Նոր ՖՊ է ճանաչվում
- Կրած ծախսերը կամ վճարները ճանաչվում են որպես մարումից օգուտի կամ կորստի մաս

ՖՊ-ի մի մասը հետ գնելիս



Նախկին ՀԱ-ը բաշխել դեռևս ճանաչվող մասի և ապաճանաչված մասի միջև՝ հետգնման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական ԻԱ-երի հիման վրա



Օգուտ կամ կորուստ ճանաչել միայն ապաճանաչված մասի գծով (գումար = այդ մասի ՀԱ հանած վճարված հատուցում)

Գնահատումներ և այլ դատողություններ

Ճանաչում և ապաճանաչում



- Ապաճանաչման պահանջները կիրառելու համար անհրաժեշտ է դատողություն կիրառել՝ որոշելու համար, թե արդյոք փոխանցված ակտիվի սեփականության ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցներն են փոխանցվել, իսկ եթե դրանք ոչ փոխանցվել են և ոչ էլ պահպանվել, ապա ո՞ր կողմն ունի հսկողությունը.

- «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
- Երևան, Գյուլբենկյան 30/3, թիվ 129
- +374 1022 9021
- +374 1032 9021
- +374 6052 9021
- +374 7722 9021
- <https://anaudit.am/>